

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. մայիսի 20-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):
2. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Գաբուզյան):
3. Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Ուսանողական խորհրդի նախագահ Հ.Զիլավյանի հաղորդումը ուսանողական խորհրդի՝ 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ծավալած գործունեության մասին:

1. **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Գաբուզյան):

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

3.1 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրո Ամիրխանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.2 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Արթուր Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Վարդանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 66 կրեդիտ, այդ թվում՝ 16 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ՝ պրակտիկայից, 30 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.3 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գրիգոր Չոբանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր Չոբանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 18 կրեդիտ, այդ թվում՝ 8 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ՝ պրակտիկայից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.4 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Ղազարյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.5 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Առնոլդ Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Առնոլդ Վարդանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 112 կրեդիտ, այդ թվում՝ 40 կրեդիտ՝ հետազոտողի կրթական բաղադրիչից, 12 կրեդիտ՝ պրակտիկայից, 60 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.6 ԼՄԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Սոսե Բաբսեղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սոսե Բաբսեղյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 88 կրեդիտ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.7 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Մարտուն Ստեփանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտուն Ստեփանյանը ձեռք է բերել հաշվետու շամանկահատված համար անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.8 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Դադունցի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Դադունցը ձեռք է բերել հաշվետու շամանկահատված համար անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.9 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիլիթ Պետրոսյանը ձեռք է բերել հաշվետու շամանկահատված համար անհրաժեշտ կրեդիտները, իսկ ատեանխոսությունն ամբողջությամբ պատրաստ է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4. ԼՄԵՑԻՆ. Ուսանողական խորհրդի նախագահ Հ.Զիլավյանի հաղորդումը ուսանողական խորհրդի՝ 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ծավալած գործունեության մասին (հաղորդումը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից 2018-2019թթ. ընթացքում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Դասախոսությունների անցկացման եղանակներ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը շարունակել է աշխատանքները ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և դրանց որակի կատարելագործման ուղղությամբ: Կախված թեմայի արդիականությունից, բարդությունից, պարզաբանման ենթակա հարցերի առանձնահատկությունից՝ դասախոսություններն անցկացվել են ինչպես ավանդական եղանակով, այնպես էլ ինտերակտիվ մեթոդներով: Ընդ որում, բոլոր դեպքերում օգտագործվել են դիտակտիկ նյութեր, սլայդեր և պրակտիկ օրինակների հիման վրա պարզաբանվել են գիտագործնական հարցերը:

Ամբիոնի գծով կարդացվող բոլոր առարկաները հիմնականում ապահովված են ամբիոնի դասախոսների կողմից հեղինակված մայրենի լեզվով դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, խնդրագրքերով, թեստերով, գործնական պարապմունքի նյութերով, ծրագրերով:

Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն օգտագործել են ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեների ընձեռած հնարավորությունները և դասավանդվող առարկաներին վերաբերող նյութերը էլեկտրոնային ձևով տրամադրել ուսանողներին:

Ուսումնական պրոցեսի անխափան իրականացման ռիսկերը նվազեցնելու նպատակով շարունակվել է ամբիոնում դասավանդվող առարկաների գծով ամբիոնի անդամների վերամասնագիտացմանն, ուսումնական պրոցեսում երիտասարդ կադրերի ներգավմանն ուղղված աշխատանքները:

Ամբիոնի գրեթե բոլոր անդամները զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը թույլ է տալիս ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը, ուսանողներին փոխանցել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ

բ) Մեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակները և մեթոդները

Հաշվետու ժամանակահատվածում առանձնակի ուշադրություն է դարձվել սեմինար և գործնական պարապմունքներին, ուսանողների վերլուծական միտքը զարգացնելու, նրանց պրակտիկ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու նպատակով շեշտը առավելապես դրվել է խնդիրներ լուծելու, կոնկրետ գործեր ուսումնասիրելու, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ Սանմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների վերլուծության վրա: Բացի դրանից դասավանդվող առարկաների գծով կազմված ուսումնամեթոդական ցուցումների հիման վրա ուսանողներին հանձնարարվել է կազմել պայմանագրեր, իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումներ, կոնկրետ թեմաների վերաբերյալ ռեֆերատներ, որոնցից լավագույնները ընթերցվել և քննարկվել են տվյալ թեմայից դասախոսության կամ գործնական պարապմունքի ժամին կամ լավագույն ռեֆերատի հեղինակին հանձնարարվել է պարզաբանել իր ուսումնասիրած հարցը:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում

Հաշվետու տարվա ընթացքում վերանայվել և նոր չափորոշիչներին են համապատասխանեցվել ամբիոնի գծով դասավանդվող որոշ դասընթացների ծրագրերը: Ամբիոնի որոշ առարկաների գծով կազմվել են ուսումնամեթոդական ցուցումներ: Ամբիոնի դասախոսները յուրաքանչյուր ընթացիկ քննության կամ ստուգման համար կազմել են համապատասխան հարցաշարեր, տեստեր, խնդիրներ և գրավոր առաջադրանքներ:

2. Գիտահետազոտական աշխատանք

2018-2019 թթ. ուս. տարվա ընթացքում ամբիոնի անդամների կողմից հրատարակել է 20 գիտական հոդված:

Թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել.

2018թ. Գևորգ Պողոսյանի, Ոչ առևտրային կազմակերպությունները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

2018թ. Արմենուհի Չիֆլիկյանի, Պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը ունենալը

2018թ. Սովսես Խաչատրյանի, Գույքի կամավոր ապահովագրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում թեմաներով:

2019թ հունիսի 24-ին տեղի կունենա ամբիոնի ասպիրանտներ **Անի Մուրաֆյանի** /Կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսական և գործնական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում վերտառությամբ/ և **Շուշանիկ Ղուկասյանի** /Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ վերտառությամբ/ ատենախոսությունների պաշտպանությունը

Ամբիոնն աշխատանքներ է իրականացրել նաև այլ բուհերի ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման, հաստատված թեմաներով գրված ատենախոսությունների վերաբերյալ եզրակացությունների տրամադրման, ասպիրանտների մասնագիտական մինիմումների ընդունման, Քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ:

Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ

ա) ՈւԳԸ.

Ամբիոնը ուշադրություն է դարձրել ուսանողների կողմից ՈւԳԸ աշխատանքների կազմակերպմանը: Ամբիոնի ՈւԳԸ ղեկավար Արսեն Թավադյանի կողմից պարբերաբար կազմակերպվում է սեմինար <<Գիտական աշխատանքներ կատարելու հմտություններ>> խորագրով: Սեմինարի ժամանակ ներկայացվել են գիտական աշխատանք գրելու հիմնական չափանիշները, տրվել են մեթոդական ցուցումներ:

Ամբիոնի անդամները ակտիվորեն մասնակցել են տարատեսակ ներպետակ և միջազգային ուսանողական դատախազ մրցույթներին պատրաստելուն: Մասնավորապես.

1. 2018թ. մայիսին և 2019թ. ապրիլին ԵՊՀ թիմերը ամբիոնի դասախոս Ն.

Ավագյանի ղեկավարությամբ մասնակցել Հայաստանի Ամերիկյան Համալսարանում տեղի է ունեցած մտավոր սեփականության իրավունքի

դատախաղ մրցույթին, որի ընթացքում զբաղեցրել են 1-ին և 2-րդ մրցանակային տեղերը:

2. Ամբիոնի անդամներ պրոֆ. Ա. Հայկյանցի և ասիս. Ա. Թավադյանի ղեկավարությամբ ԵՊՀ թիմը 2019թ. ապրիլին մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցած առևտրային արբիտրաժին նվիրված դատախաղ մրցույթին և զբաղեցրել առաջին մրցանակային տեղը:
3. ԵՊՀ թիմը ամբիոնի դոցենտ Գ. Բեքմեզյանի մասնակցությամբ 2019թ ապրիլի 27-ից 28-ը մասնակցել է Ֆինանսական հաշտարարի գրասենակի կողմից կազմակերպված ապահովագրական իրավունքին վերաբերող դատախաղմրցույթին և զբաղեցրել առաջին մրցանակային տեղը:
4. ԵՊՀ թիմը ամբիոնի ասիստենտ Գ. Պողոսյանի մասնակցությամբ 2019թ ապրիլի 7-ին ԱՄՆ-ում մասնակցել է Ֆիլիպ Ջեսապի անվան դատախաղ մրցույթին :

զ) Կլինիկա

Ամբիոնի դասախոսները ակտիվ օգնություն են ցույցաբերել կլինիկայում

զ) Կուրսային աշխատանքներ

Քաղաքացիական իրավունք առարկայի և՛ առաջին (երկրորդ կուրս), և՛ երկրորդ (երրորդ կուրս) մասերով ներկայացվել են կուրսային աշխատանքներ: Ամբիոնի դասախոսներն ուսանողների հետ տարել են բացատրական աշխատանքներ և իրականացրել պատշաճ հսկողություն պահանջվող չափորոշիչներին համապատասխան աշխատանքներ կազմելու և ներկայացնելու ուղղությամբ :

դ) Ինքնուրույն աշխատանք

Ինքնուրույն աշխատանքի նպատակը մագիստրական թեզերի որակով կատարելն ու ժամանակին պաշտպանության ներկայացնելն է. այդ ուղղությամբ ամբիոնը ձեռնարկել է, որոշակի բավարար միջոցառումներ: Նախ, հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել մագիստրանտների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստմանը, ստուգարքն ընդունել են ամբիոնի նիստում ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

4. Կադրերի պատրաստում և վերապատրաստում

ա) Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք

Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Ամբիոնն ունի 2 առկա և 8 հեռակա ուսուցման ասպիրանտ և 1 հայցորդ: Ամբիոնի գրեթե բոլոր անդամները զբաղվում են պրակտիկ աշխատանքով, որով փորձ է կատարվում ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը:

Ամբիոնում պարբերաբար քննարկվում են ասպիրանտների ու հայցորդների հաշվետվությունները, նրանց գիտական հոդվածները: Ամբիոնը նրանց աջակցություն է ցուցաբերել հոդվածների տպագրման, թեզերի պատրաստման աշխատանքներին կազմակերպման և նախնական պաշտպանության հարցում:

բ) Ասպիրանտներին մանկավարժական աշխատանքի ներգրավում

Ամբիոնը սապիրանտներին ակտիվորեն ներգրավում է ուսումնական գործընթացին: Ամբիոնի յուրաքանչյուր սապիրանտ, բացի նախատեսված դասաժամերից, մասնակցում է նաև մյուս առարկաների թե՛ դասախոսությունների, և թե՛ սեմինար (գործնական) պարապմունքներին, ինչը նպաստում է գիտելիքների խորացմանն ու փորձի ձեռքբերմանը:

Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի սկզբին տեղի է ունենում, արդեն ավանդույթ դարձած, սապիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որին մասնակցում են ամբիոնի գրեթե բոլոր սապիրանտներ և հայցորդներ:

գ) Ամբիոնի դասախոսների վերապատրաստում

1. Ամբիոնի ասիստոնտ, ի.գ.թ. **Ռ.Գրիգորյանը** 03.04.2018-11.07.2018թթ. մասնակցում է CIARB-ի /Chartered Institute of Arbitrators / Որակավորված արբիտրների ինստիտուտ/ կողմից Լոնդոնում կազմակերպված Միջազգային արբիտրաժ թեմայով Մոդուլ 1 դասընթացին: Դասընթացը որակավորված միջազգային արբիտրի որակավորում ստանալու համար պարտադիր ուսումնական ծրագրի մի մասն է: Մայիսի 2-ին Լոնդոնում Ռ.Գրիգորյանը մասնակցել է այդ դասընթացի կոնֆերանսներից առաջինին, վերջնական քննությունը հանձնելու է հուլիսի 11-ին: Դասընթացի շրջանակներում ուսումնասիրում են միջազգային արբիտրաժի ամբողջ գործընթացը և իրավական կարգավորումները, ինչպես նաև որոշ մայրցամաքային և ընդհանուր իրավունքի երկրների մասնավոր իրավունքը:
2. 2018թ Նոյեմբերի 1-ին և 2-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ **Արսեն Թավադյանը** մասնակցել է GIZ-ի, Մաքս Պլանկի ինստիտուտի և Թբիլիսիի պետական համալսարանի կողմից կազմակերպված <<Կամքի ինքնավարությունը որպես քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունք>> խորագրով գիտաժողովին, որը նվիրված էր ժամանակակից աշխարհում կամքի ինքնավարության խնդրին և դրա զարգացումներին նոր տեխնոլոգիաների համատեքստում: Գիտաժողովին մասնակցում էին Գերամիայից, Ուկրաինայից, Էստոնիայից, Ղազախստանից և մի շարք երկրներից ժամանած առաջատար գիտնականներ: Արսեն Թավադյանը ներկայացրել է զեկույց՝ <<Կամքի ինքնավարությունը և նյութական հայցի իրավունքը>> թեմայով:
3. 2019 թ. փետրվարի 5-9 ամբիոնի վարիչ, պրոֆ. **Վ. Ավետիսյանը** Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում մասնակցել և զեկույցով հանդես է եկել խաղային իրավունքի միջազգային միության կողմից կազմակերպված խաղային իրավունքի արդի հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսին:
4. 2019 թ. փետրվարի 12-ին ամբիոնի վարիչ, պրոֆ. **Վ. Ավետիսյանը** ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում մասնակցել և զեկույցով հանդես է եկել ԱՊՀ ՄԽՎ ԺԶՄՄԻ կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանսին:
5. 01.04.2019թ.-ից մինչև 10.04.2019թթ. Erasmus Plus ծրագրի շրջանակներում ամբիոնի ասիստենտ **Ա. Թավադյանը** գտնվել է Լեհաստանի Բյալիստոկ քաղաքի համալսարանում և <<Հայաստանի Հանրապետությունում

ձեռնարկատիրության կարգավորումը>> թեմայով հանդես է եկել դասախոսությամբ:

Բյալիստոկի համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովում հանդես է եկել նաև զեկույցով՝ <<Հետխորհրդային երկրների ներդրումային քաղաքականությունը>> թեմայով:

Ամբիոնի վարիչ

Վ. Ավետիսյան

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ուսումնամեթոդական ձեռնարկներ

1. [Դավիթ Սերոբյան](#), ՀՀ քաղաքացիական իրավունք. սեփականության իրավունք, Ուսումնական ձեռնարկ, խմբ.՝ Վ. Դ. Ավետիսյան:– Եր.: ԵՊՀ հրատ., 2018, 221 էջ (էլեկտրոնային գիրք)

Գիտական հոդվածներ

2. [Vahram Avetisyan](#), Corporate Governance and Resolution of Corporate Disputes in the Republic of Armenia, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 110-126
3. [Grikor Bekmezyan](#), On Some Issues Pertaining to Compensation of Non Pecuniary Damage in Civil Law of the Republic of Armenia, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 153-165
4. [Գրիգոր Բեքմեզյան](#), Նարինե Ավագյան, Անբարեխիղճ մրցակցության պատմական զարգացումը և հասկացությունը, Պետություն և իրավունք, N 3-4 (81-82), Երևան, 2018, 56-62
5. [Գրիգոր Բեքմեզյան](#), Օրենք և տնտեսագիտություն, Պետություն և իրավունք, N 2 (80), Երևան, 2018, էջ 5-11
6. [Գրիգոր Բեքմեզյան](#), Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասների հատուցումը
7. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 2 (26), էջ 26-35
8. [Davit Serobyanyan](#), The Problem of Interplay of the Concepts of Economic Activity and Entrepreneurial Activity in the Light of Constitutional Amendments, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 127-137
9. [Tatevik Davtyan](#), Promoting a Pro Bono Culture in Armenia's Legal Profession, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 173-189

10. [T. Davtyan](#), [A. Hovhannisyan](#), Promoting a Pro Bono Culture in Armenia's Legal Profession: The Need for Strong Policies and High Minds, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 2018, էջ 72-83
11. [Arpine Hovhannisyan](#), [Narine Avagyan](#), Trademarks and Brands: What are the Differences? Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 138-152
12. [Դավիթ Սերոբյան](#), Տնտեսական և գործարարական գործունեության հարաբերակցության հիմնախնդիրը սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 1 (25), էջ 45-52
13. [Arsen Tavadyan](#), Regulation of Invalid Contracts Under Armenian Legislation, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, p. 166-172
14. [Արսեն Հովհաննիսյան](#), Հակամրցակցային համաձայնությունների արգելման հիմնախնդիրը հայաստանի հանրապետությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, 2018, էջ 162-176
15. [Արմենուհի Չիֆլիկյան](#), Վիրավորանքի քաղաքացիաիրավական բնութագիրը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, 2018, էջ 176-190
16. [Սոնա Թևանյան](#), Էլեկտրաէներգիան որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, 2018, էջ 190-203
17. [Քրիստինե Գաբուզյան](#), Հայցային վաղեմության ինստիտուտի էությունը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 101-122
18. [Արթուր Վարդանյան](#), Կոռպորատիվը որպես իրավաբանական անձի յուրահատուկ տեսակ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 122-137
19. [Եվա Սաղոյան](#), Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 137-153
20. [Ռուբինա Պետրոսյան](#), Խնամակալությունը եվ հոգաբարձությունը, խնամատար ընտանիքը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի եվ դաստիարակության կազմակերպմանն ուղղված ինստիտուտներ (իրավահամեմատական վերլուծություն), ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 153
21. [Սամինե Պետրոսյան](#), Ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տնօրինումը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 178 -192
22. [Աշխեն Սողոմոնյան](#), Տնտեսական ընկերության լուծարման հիմքերը եվ դրանց դասակարգումը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2018, էջ 192-21:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք՝

ա) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.

Դասախոսությունները անցկացվում են ինտերակտիվ եղանակով, քննարկումների ձևով, որոշ թեմաներ ներկայացնում են ուսանողները՝ զեկույցի տեսքով

բ) Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների վերանայում, դրանց կատարելագործում և նոր մեթոդների ներդրում.

Սեմինարները անցկացվում են պրակտիկ խնդիրները լուծելու միջոցով, իսկ մագիստրատուրայում ուսանողների կողմից թեմա ներկայացնելու և դրա շուրջ քննարկումներ կազմակերպելու միջոցով

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում:

ամբիոնի բոլոր առարկաների հարցաշարերը առկա են, առկա է ընդհանուր մասի խնդրագիրքը, այս տարի բակալավրիատում դասավանդվող իրավական վիճակագրություն առարկան փոխարինվեց նախադեպը քրեական իրավունքում առարկայով, որը կարծում ենք ավելի նպատակահարմար է գործնական գիտելիքներ ապահովելու տեսանկյունից, բացի այդ, կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրի շրջանակներում հանցավոր վարքագծի մոտիվացիաառարկայի փոխարեն ընդգրկվել է կոռուպցիայի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները առավել գործնական նշանակություն ունեցող և խիստ արդիական թեման:

2. Գիտահետազոտական աշխատանք

ա) Մասնակցություն միջազգային և տեղական կոնֆերանսներին (զեկույցումներ).

Անչափահասների արդարադատություն. զարգացման հեռանկարներ թեմայով հանրապետական կոնֆերանս, որին զեկույցումներով մասնակցեցին Աննա Մարգարյանը, Հարություն Խաչիկյանը, Արա Գաբուզայնը :

բ) Մենագրությունների, գիտական հոդվածների, ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրում:

Տպագրվել է 12 գիտական հոդված:

Ամբիոնի երկու դասախոս՝ Էս և Աննա Մարգարյանը մասնակցում ենք Անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳՊԿ կողմից ֆինանսավորվող թեմային:

Ինչ վեաբերում է դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին, ապա քրեական օրենսդրության խիստ անկայունության պայմաններում դրանց վրաաշխատելը դարձել է խնդրահարույց: Քրեական նոր օրենսգրքի նախագիծը ընդունելուց հետո կպատրաստենք օրենսգրքի մեկնաբանությունները և դրա հիման վրա բուհական դասագրքերն ու նոր խնդրագրքերը:

3. Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ՝

ա) ՈւԳԸ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ.

Տարվա մե երկու անգամ կազմակերպվում է ՈւԳԸ նստաշրջան, որտեղ զեկուցվում են լավագույն աշխատանքները իսկ դրանցից առավել հաջողվածները տպագրվում են, նախատեսվում է նաև տարբեր թեմաներով քննարկումների կազմակերպում: Այս տար ՈւԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում նվիրված ապօրին իհարստացման համար քրեական պատասխանատվությանը, որտեղ զեկուցումով հանդես է եկել ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանը: Կազմակերպվել է նաև դասախոսություն քննարկում նվիրված իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը, որին դասախոսություն է կարդացել ամբիոնի դասախոս Սրբուհի Գալյանը: Գործարկվել է Մուդլ համակարգը՝ հիմնականում առայժմ մագիստրատուրայում:

բ) Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթներին մասնակցություն.

Երեք տարի անընդմեջ մասնակցել ենք քրեական իրավունքի միջբուհական դատախաղ մրցույթին, որտեղ երեք անգամ հաղթել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի թիմը:

գ) Իրավաբանական կլինիկայի հետ համագործակցություն:

4. Կադրերի պատրաստում և վերապատրաստում՝

ա) Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք.

Ասպիրանտները և հայցորդները պարբերաբար մասնակցում են տարեկան գիտաժողովին, այս տարի չորս ասպիրանտ և մեկ հայցորդ մասնակցել են տարեկան գիտաժողովին:

բ) Ասպիրանտներին մանկավարժական աշխատանքներին ներգրավում.

Բոլոր ասպիրանտները ներգրավված են դասավանդմանը՝ անցկացնում են սեմինար պարապմունքներ, ընդ որում պետք է նշել, որ ուսանողները շատ գոհ են բոլորից:

գ) Ամբիոնի դասախոսների վերապատրաստումներ, գործուղումներ և այլ մասնագիտական գործունեություն:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են Աննա Մարգարյանի և Անի Սիմոնյանի կողմից անցկացված վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև ԵՊՀ կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

Ամբիոնի դասախոս Ժենյա Սյրեփանյանը Բոննում վերապատրաստում է անցել <<Եվրոպական իրավունք>> թեմայով, իսկ Արման Հովհաննիսյանը ԱՄՆ-ում դպրական գործի կազմակերպման բնագավառում: Աննա Մարգարյանը դասախոսություններ է կարդում Արդարադատության ակադեմիայում և Եվրոպական իրավունքի կենտրոնում:

5. Ֆակուլտետի գործունեության միջազգայացում՝

ա) Միջազգային կապերի հաստատում և ընդլայնում.

Սլովենիայի համալսարանի հետ հուշագրի ստորագրում: Ներկայումս Աննա Մարգարյանը դասախոսություններ է կարդում մայիսի 11-17-ը՝ Սլովենիայի Լյուբլյանայի համալսարանում, մայիսի 20-27-ը՝ մասնակցելու է Հոնգ Կոնգում կայացող ICAC (Կոռուպցիայի դեմ պայքարի) 7-րդ կոնֆերանսին, հունիսի 2-5-ը, մասնակցելու է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում կայանալիք՝ Քրեական արդարադատության ոլորտի վիճակագրության խմբի համաժողովին:

Աշնանը Արդարադատության ակադեմիայում ամերիկյան ՆԱՊԱ կազմակերպության և ՀՀ –ում ԱՄՆ Դեսպանատան աջակցությամբ

վերապատրաստման դասընթացներ անցկացվեցին դատավորների և դատախազների համար՝ կոռուպցիայի, մարդու իրավունքների, գենդերի վրա հիմնված բռնության, մտավոր սեփականության քրեաիրավական պաշտպանության, կազմակերպված հանցավորության հետ կապված հիմնախնդիրներով, որպեսզի դասախոսություններ կարդացին Աննա Մարգարյանը, Արա Գաբուզյանը: Գարնանը Նոթինգեմի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ փաստաբանների դպրոցում, անգլիացի գործընկերների հետ համատեղ դասախոսություններ են կարդացել Աննա Մարգարյանը, Հարություն Խաչիկյանը և Արա Գաբուզյանը:

բ) Միջազգային մրցույթներին մասնակցություն.

պատրաստվում է մասնակցություն Մարդու իրավունքների եվրոպական իրավունքի վերաբերյալ դատախազին՝ Ստրասբուրգում: Մասնակցել ենք միջազգային քրեական իրավունքի Նյուրնբերգի դատախազին՝ միջազգային իրավունքի ամբիոնի հետ համատեղ:

գ) Միջազգային գիտաժողովներին մասնակցություն

դ) Արտասահմանյան ամսագրերում և էլեկտրոնային պարբերականներում գիտական հոդվածների տպագրում.

Ա. Մարգարյանը, Ա. Գաբուզյանը և Հ. Խաչիկյանը էլեկտրոնային հոդվածներ են հրապարակել Միջին Վոլգյան ինստիտուտի համար

ե) Հրավիրյալ դասախոսներ.

Պրոբացիայի հիմնախնդիրներով սեպտեմբեր ամսին դասախոսություններ են կարդացել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ռայնբախի առաջին աստիճանի դատարանի նախագահ Սիլվիա Վուրմը և Վալդբրոյլի առաջին աստիճանի դատարանի նախագահ Ֆաբիան Քրափոթը:

Մագիստրատուրայում, կրիմինալոգիա մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասախոսություններ են կարդացել Հելսինկյան կոմիտեի Երևանյան գրասենյակի նախագահ Ավետիք Իշխանյանը, Արդարադատության նախարարության քրեակարարողական վարչության իրավական, սոցիալական և հոգեբանական օգնության բաժնից Հովհաննես Մարգարյանը, ՀՀ Ամերիկյան համալսարանի դասախոս Սիրանուշ Դվոյանը, բակալավրիատի

երկրորդ կուրսում քրեական իրավունքից դասախոսություն է կարդացել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. Գիտ. դոկ., պրոֆ. Լիլիթ Թադևոսյանը:

զ) Օտարերկրյա ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում:

6. Ֆակուլտետի վարկանիշի բարձրացման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում:

7. Միջազգային և ներպետական մրցույթների կազմակերպում և դրանց մասնակցություն, ուսանողների ամառային և ձմեռային դպրոցների կազմակերպում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ուսանողական խորհուրդ

(2017-2018 ուսումնական տարի)

ք. Երևան

«_____»

2018 թ.

h/h	Միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման ն օրը
1.	Առաջին կուրսեցիների հետ հանդիպում	Ուսանողական իրազեկում	04.09.2017
2.	Հեռակա ուսուցման ուսանողների հետ հանդիպում	Ուսանողական իրազեկում	01.11.2017
3.	Հանդիպում (ՈՒԳԸ-ի հետ համատեղ)	Հաջողության պատմություններ. Տարոն Սիմոնյան	15.11.2017
4.	Դատախազ	Ցիզերոնն ընդդեմ Կատիլինայի	16.12.2017
5.	Դատախազ	Քրեական իարվունքից իրավիճակային խնդիր	06.12.2017
6.	Ֆեյսբուքյան էջում նյութերի տեղադրում	Մերօրյա հերոսներ, ֆիլմերի շարք, «ոտքի, դատարանն է գալիս»	2017 թ. սկսած
7.	Այցելություն	ՄԻՊ գրասենյակ	05.03.2018
8.	Գրքի քննարկում	«Ջոնաթան Լիվինգստոն ճայլը»	16.05.2018
9.	Հանդիպում (ՈՒԳԸ-ի համատեղ)	Հաջողության պատմություններ (հանդիպում 3)	15.03.2017
10.	Հանդիպում	Հաջողության պատմություններ (հանդիպում 5)	14.05.2018

11.	Առաջին կուրսեցիների իրազեկում	Ուսանողական իրազեկում ծրագիր	2018 թվականի օգոստոս
12.	Հանդիպում	Առաջին կուրսեցիների դիմավորում	04.09.2018
13.	Այցելություն	Փաստաբանների պալատ և Փաստաբանների դպրոց	27.09.2018
14.	Քննարկում (Ռուսական կենտրոնի հետ համատեղ)	«Հեղափոխություն թե իշխանափոխություն»	02.10.2018
15.	Սպորտային միջոցառում	Միջֆակուլտետային ֆուտբոլի առաջնություն (1-ին տեղ)	2018 թ. հոկտեմբեր
16.	Շրջայց, ժամանց	Երևանի տոնը ուսանողների հետ նշել, շրջայց Երևանում	22.10.2018
17.	Այցելություն	Փաստաբանների պալատ և Փաստաբանների դպրոց	24.10.2018
18.	Ինտելեկտուալ խաղ	«Ինչ, որտեղ, երբ» ներֆակուլտետային փուլ	17.10.2018
19.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 1: Թեմա՝ փաստաբանական հմտություններ, դասընթացավար՝ Գնել Մուղնեցյան	13.11.2018
20.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 2: Թեմա՝ Իրավաբանական տեխնիկա, դասընթացավար՝ Տարոն Սիմոնյան	14.11.2018
21.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 3: Թեմա՝ Առևտրային արբիտրաժ, դասընթացավար՝ Վահե Հովհաննիսյան	15.11.2018
22.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 4: Թեմա՝ Ապացույցները ՀՀ քրեական դատավարությունում, դասընթացավար՝ Սերգեյ Մարաբյան	16.11.2018
23.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 5: Թեմա՝ քննչական տակտիկա, դասընթացավար՝ Վահե Ենգիբարյան	19.11.2017. 2018
24.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 6: Թեմա՝ քրեական դատավարության որոշ հիմնախնդիրներ, դասընթացավար՝ Տիգրան Ղազարյան	20.11.2018 15.11.2018
25.	Պրակտիկ դասընթացներ	Հանդիպում 7: Թեմա՝ irac համակարգ, դասընթացավար՝ Տաթև Սուջյան	21.11.2018

Ընդ
հան

ուր թվով՝ 6 հանդիպում, 3 այցելություն, 2 քննարկում, 7 սեմինար, 2 մրցույթ, 2 դատախաղ: